

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՎՈ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ*

4.—ԻՇԽԱՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

Այս 22 ժողովներեն 7-ին մեջ բացահայտորեն հիշված է որ իշխաններ ներկա եղած են ժողովներուն. հիշված է նաև անոնց թիվը, երբեմն նաև անունները:

Այս 22 ժողովներեն 10-ին մեջ նախարարաց կամ իշխանաց բնավ հիշատակություն չկա. բացահայտորեն անոնք ներկա չեն եղած:

Այս թիվին վրա կրնանք ավելցնել նաև Երուսաղեմի Ժողովը, ուր ներկա եղած 120 հոգևորականներու կարգին հիշված են նաև «ժողովրդական ուխտավորների հապար կամ այլ ավելի»: Կասկածե վեր է թե այս «հապարե ավելի» ուխտավորները ներկա են անդլոկ որպես հանդիսատես կամ ունկնդիր: Այնպես որ այս ժողովներուն ճիշդ կեսին մեջ կբացակային աշխարհական իշխաններ:

5.—ԻՇԽԱՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ:

Բացահայտ է, որ այս «իշխանները» կամ «նախարարները» ժողովուրդեն ընտրվելով կամ լիապորվելով չէ որ ներկա կըլլան այս ժողովներուն, այլ՝ սոսկ իրենց **իշխանական** հանգամանքով: Այսինքն իրենց **ժառանգական** իրավունքով: Բուն ժողովականները ըստ համաքրիստոնեական և առաքելական ավանդության ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ են: Մեր մեջ սակայն սովորություն եղած է այս ժողովներուն հրավիրել նաև իշխաններու կամ նախարարներու հետ նաև վարդապետներ, երեցներ, կրոնավորներ մինչև իսկ կարգ մը պարագաներուն նաև սարկավագներ և «Սուրբ Եկեղեցվո Ուխտը», որոնք բացահայտորեն աշխարհականներ չեն, և ոչ ալ՝ այսպես ասած՝ ժողովուրդի ներկայացուցիչներ:

Ինչպես ասկե առաջ ակնարկեցինք, իշխանները ներկա են իբրև **գործադիր իշխանության ներկայացուցիչներ:** Այդ օրերուն պետություն և եկեղեցի միացած էին: Կրոնական Ժողովներու որոշումները պետական կանոններու ուժ ունեին և պետական կանոն էին: Որոշողները եկեղեցիի գլխավորողները, առաջնորդները կամ հոգևոր իշխանավորներն էին. իսկ գործադրության դնողները՝ աշխարհիկ իշխանավորներն էին: Բյուզանդական կայսրության մեջ եպիսկոպոսական ժողովներու կանոնները և որոշումները գործադրել տվողը կայսրն էր: Ժողովներուն որոշումները և կանոնները բանաձևվեյե և վերջնական ձև ստանալե հետո մեծամասնության ձայնով, կհանձնվեին կայսեր, որ կհրահանգեր անոնց գործադրությունը: Նույն էր նաև դերը հայ թագավորներուն և անոնց չգոյության պարագային հայ իշխաններուն և նախարարներուն: Անոնք ներկա են ժողովներուն, պարզապես իրավեկ դառնալու տրված որոշմանց և դրված կանոններուն՝ որպեսզի յուրաքանչյուր իշխան հրահանգե անոնց գործադրությունը իր սեպ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № Բ-ից:

հական գավառներուն մեջ, քանի որ կեդրոնական աշխարհիկ հայ իշխանությունը վերցված էր: Օտար տիրապետողներ, Հայոց թագավորությունը ջնջելով հանդերձ թույլ տված էին որ հայ նախարարներ շարունակեն իրենց գոյությունը, որոնք իբրև մանր արքայիկներ կկառավարեին իրենց սեպհական գավառները ընդ իշխանությամբ օտար տիրակալին, որ կհետաքրքրվեր միայն իր ստանալիք տուրքով կամ վորքով. իսկ ներքին խնդիրները, հատկապես կրոնականները, ամբողջությամբ ձգված էին տեղական հայ իշխանին իրավասության: Այնպես որ այս ժողովներու մեջ իշխաններու ներկայության փաստեն հետևցնելով որ Հայ Եկեղեցին «ժողովրդավարական» վարչություն ունեցած է կամ «աշխարհականներ» ալ ներկա գտնված են մեր Եկեղեցիի ընդհանրական ժողովներուն եպիսկոպոսներու հավասար ձայնով կամ անոնց համավոր հանգամանքով, պատմականորեն չարդարանար: Մինչև ԺԹ դար Հայ Եկեղեցին ոգիով և վարչությամբ շատ քիչ տարբերություն ուներ արևելյան մյուս Եկեղեցիներեն, ներառյալ Օրթոդոքս Եկեղեցին: Տարբերությունը սկսավ ԺԹ դարուն, երբ երկու տարբեր պետական կանոնադրություններ պարտադրվեցան Հայ Եկեղեցիին, մեղսակցությամբ կամ համակերպությամբ օրվան հոգևոր իշխանության և Հայ մտավորականության: Ասոնց մասին է որ կուզենք ավելի հանգամանորեն անդրադառնալ ստորև:

Ընդհանրական Ժողով գումարելու մանրամասնությանց շուրջ ոչ մեկ օրինակ նախատեսություն կամ օրենք կհիշենք մեր հին կանոններուն մեջ: Օրինակ ո՞վ լիազորված է նման ժողովներ հրավիրելու. Ո՞վքեր իրավասու են ներկա լինելու նման ժողովներուն, ի՞նչ օրենքներով և սկզբունքներով պետք է կառավարվին անոնք: Եթե մեր բոլոր ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ աչքե անցնելու կարելիությունը ունեցած ըլլայինք, թերևս այս հարցումներեն ոմանց հավանական պատասխաններ կարելի ըլլար գտնել: Արդ այս անորոշությունները քիչ շատ հստակեցնելու նպատակով և այս ժողովներուն և եկեղեցվո վարչության օրինական ձև ու կերպարանք տալու համար ստեղծվեցան մեր մեջ երկու պետական ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ասոնցմե առաջինը գործադրության դրվեցավ 1837-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, ռուսական կայսրության մեջ ապրող հայության համար «ՊՈԼՈԺԵՆԻԵ» ռուսական անունով. իսկ երկրորդը գործադրության դրվեցավ 1863-ին Թուրքիո Հայոց Պատրիարքության մեջ, Օսմանյան կայսրության մեջ գտնվող հայության համար «ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» անվան տակ: Այժմ նախ ընդհանուր ակնարկ մը նետենք անոնցմե յուրաքանչյուրին վրա ստուգելու համար թե որչափով անոնք կհամապատասխանեն համաքրիստոնեական և Հայ Եկեղցիի ժողով գումարելու ոգիին և ավանդության:

Գ.— ՊՈԼՈԺԵՆԻԱ:

Երբ Մայր Աթոռը մտավ Ռուսական տնօրինության ներքև Թյուրքմենչայի դաշինքով, 1828, Ռուս պետությունը ուզեց գիտնալ թե ինչ կանոններով կկառավարվեր Հայոց Եկեղեցին: Օրմանյան հետևյալ խորհրդածությունը ունի այս մասին. «Կաթողիկոսարանը առձեռն կանոնագիր մը չուներ ներկայելու: ԿԱՆՈՆԱԳԻՐՔ մը կար Օձնեցիի ժամանակեն կազմված, բայց հավաքածո մըն էր վանական կանոններու, որոնց մեջ վարչականները կատարյալ չէին, և ամոթ չսեպվի խոստովանիլ, թե գուցե Մայր Աթոռն ալ այն ատեն վայն իր ձեռքին տակ չէր պահեր և անով չէր գործեր, պի խառնաջփոթ ժամանակներ ամեն կարգ ու կանոն խանգարած էին, ու կաթողիկոսներու, իշխաններու և եպիսկոպոսներու կամայական գործեր ասպարեզ գտած էին» (ԱԶԳ., հտ. 2515):

Ասոր վրա Ռուսական կառավարությունը ինք նախաձեռնակ եղավ **կազմական կանոնագիրք** մը հորինելու Հայ Եկեղեցիին համար: Գրեթե 10 տարի ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարեցին պետության կողմե նշանակված հայ կամ օտար մասնագետներ և Հանձնախումբեր, մինչև որ ի գլուխ հանեցին այս գործը, և որ 1836-ին տպագրվելով հանձնվեցավ Մայր Աթոռ՝ գործադրվելու համար 1837 տարեգլուխեն սկսյալ: Այս ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ծանոթ է՝ հայացած ձևով՝ ՊՈԼՈԺԵՆԻԱ ռուսական անունով, որ վերևի գլխագրյալ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ բառին հետ նույն իմաստն ունի: Տպագրյալ Պոլոժենիայի անվանաթերթին վրա ըսված է, «Բարձրագոյն ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ Յաղագս Կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի ՌՈՒՍԱՍՏԱՆ»: Այս վերջին բառեն դյուրին է ենթադրել, որ այս Օրենքը կազմողներ երբեք մտադրություն չեն ունեցած համայն Հայ Եկեղեցիին համար օրենք կազմելու: Այսուհանդերձ հոդվածներուն մեջ մտած են այնպիսի օրինական տրամադրություններ, որոնք կվերաբերին ուղղակի կամ անուղղակի կերպով համայն Հայ Եկեղեցիին:

ՊՈԼՈԺԵՆԻԱՆ բաժնված է 10 գլուխներու և կբաղկանա 141 հոդվածներե:

Օրմանյան Պոլոժենիայի վերլուծման իր խորհրդածությունը վերջավորության կբերե հետևյալ եզրակացությամբ: «Բացարձակ կերպով չենք կրնար ուրանալ, որ մեծ քայլ մը և հիմնական օգուտ մըն է որոշված և պաշտոնապես հաստատված և գործադրու-

թյան միջոցներով վորացած կանոնադրություն մը ունենալ. մինչև իսկ թերի և դիտողությանց տեղի տվող բան մը ունենալը՝ բնավ չունենալեն տասնապատիկ և հարյուրապատիկ լավագույն է: Մանավանդ եթե նկատի առնվի Սիմեոն Երևանցիի մահվան հաջորդող շփոթությանց և խռովությանց կիսադարյան միջոցը, որ հետևանքն էր ընտրողական և վարչական և ներքին հարաբերական առձեռն օրենք մը, հաստատուն կանոնադրություն մը չգտնվելուն: Պետք չէ ալ լռենք որ եկեղեցական բարեկարգության համար ավելի ապդեցիկ եղած է Պոլոժենիան Ռուսահայոց համար, քան Սահմանադրությունը Տաճկահայոց համար» (ԱԶԳ., հտծ. 2529):

Դ.—ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

Ինչ դեր որ սահմանված էր ՊՈԼՈԺԵՆԻԱՅԻ՝ Ռուսական կայսրության սահմաններու մեջ ապրող հայության կրոնա-եկեղեցական կյանքին մեջ, նույն դերը վերապահված էր ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ՝ Օսման տերության մեջ գտնվող հայության համար: Երկուքն ալ հաստատված ու պաշտպանված էին պատկան պետություններեն: Երկուքն ալ մաս կազմած էին պատկան երկրին օրինական դրության և հետևաբար երկուքին ալ որոշումները, որոնք հանրության կվերաբերեին, կգործադրվեին պետութենեն: Տարբերությունը վարչական դրության և մանավանդ Եկեղեցիի մասին իրենց ունեցած ուրույն տեսակետին և գաղափարին մեջ կկայանար:

ՊՈԼՈԺԵՆԻԱՆ, ինչպես անոր առաջին հոդվածը կտրամադրե, «բարձրագոյն կարգաւորութիւն» մըն է, «Լուսաւորչական Հայոց ԵԿԵՂԵՑԻՈՅ ի Ռուսաստան»: Ու այս բացատրությունը կգործադրվի 141 հոդվածներե բաղկացյալ այս կանոնադրության գրեթե ամեն մեկ հոդվածին մեջ: Հետևաբար տարակույսե վեր է, որ Պոլոժենիան ԵԿԵՂԵՑԱԿԱՆ կանոնադրություն մըն էր: Իսկ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ինչպես անունը կհաստատե, ԱԶԳԱՅԻՆ կանոնադրություն մըն է: «ԱԶԳ» բառը այնքան հաճախ կգործածվի այս կանոնադրության մեջ որքան «ԵԿԵՂԵՑԻ» բառը Պոլոժենիայի մեջ: «Հայաստանյայց Եկեղեցիի» բացատրությունը, եթե չենք սխալիր, երկու անգամ միայն գործածված է 99 հոդվածներե բաղկացյալ Սահմանադրության մեջ:

Սահմանադրության մասին Օրմանյան ունի խորհրդածությանց շարք մը, «ԱՆԿԱՇԿԱՆԴ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» վերնագրով, զոր կուզենք հառաջ բերել նույնությամբ:

«Ազգային Սահմանադրությունը երկար ատեն ազգին մղձավանջն եղավ. և հաստատվելեն ետքն ալ ազգին պարծանքը սեպվեցավ և մինչև վերջին օրեր ամենայն գուրգուրանքով պահվեցավ և պաշտպանվեցավ, և վտանգներեն ապատվիլը մեծ հաջողություն սեպվեցավ: Որչափ ալ այս տողերը գրողն ևս յուր մասնակցությունն և աշխատությունն ունեցած է վերջին պարագաներու մեջ, Սահմանադրության գոյությունը պաշտպանելու, այսու ամենայնիվ անաչառ պատմագիրի և անկաշկանդ քննասերի պարտք կսեպե իրականության պարագաներն ալ չծածկել յուր ընթերցողներեն: Սահմանադրական շրջանը, այսինքն 1860-են ասդին անցած կես դարը անկասկած ազգային վարգացման և հառաջդիմության ժամանակամիջոց մը եղած է, սակայն իրավացի չէր ըլլար կարծել թե այս ամենը պարզապես Տաճկահայոց Սահմանադրության արդյունքն է, զի շատ ավելի պատճառներ, ինչպես դարին պահանջը, միջազգային շփումները, պետական կարգադրությունները, օտարաց ձեռնտվությունները, նպաստեին այդ արդյունքը հառաջ բերելու: Մանավանդ պետք չէ մոռնալ որ Ռուսահայեր առանց Տաճկահայոց Սահմանադրության, անոնցմե ավելի հառաջացած և վարգացած կգտնվին այսօր: Տաճկահայոց դիրքը, որ հատուկ կացության, ներքին կազմակերպության և ինքնուրույն վարչության առավելությունները վայելած է անցյալին Օսմանյան գահուն հովանավորության ներքև, **իրեն հիմ ունեցած է կրոնական սկզբունքը և եկեղեցական կերպարանը, և անով ապրած է միշտ, որով այս սկզբունքը հնար չէր խախտել առանց կացության կերպարանը խախտելու:** Ազգին որոշ կանոնադրություն մը ունենալը անհրաժեշտ էր, դասակարգերուն ժառանգական կամ նյութական առավելությամբ իրարու վրա ճոխանալը նոր ժամանակը չէր ներեր, եկեղեցական գործոց մեջ աշխարհական տարրին մասնակցությունը Հայ Եկեղեցվո սեփական պարծանքն էր, և այդ հիմերը պետք էր որ նվիրագործվեին պաշտոնական կանոնադրության կամ Սահմանադրության մեջ: **Բայց այդ նպատակները իրականացնելու ձեռնարկողներ ավելի քան ավանդական սկզբունքներե, իրենց կրթված տեղվույն, հայտնի ըսենք գաղղիական երկրին ու մթնոլորտին ազդեցություններեն առաջնորդված իրենց ներշնչումներն առին նույն երկրին քաղաքական գաղափարներեն և նույն մթնոլորտով ոգևորվեցան, և կրոնական ու եկեղեցական հիմամբ կազմված հասարակությունը՝ պարզապես քաղաքական հասարակության մը ձևին կաղապարել հորդորվեցան:** Ընդհանուր Ժողովին մեջ 20 եկեղեցականի դեմ 120 աշխարհական, վարչական ժողովներու և խորհուրդներու մեջ 24 եկեղեցականի դեմ 62 աշխարհական, թաղական

խորհուրդներու մեջ բոլորը աշխարհական, **անշուշտ եկեղեցական նշանակության նվաստացման և կրոնական ազդեցության տկարացման պիտի առաջնորդեին:** Մանավանդ որ ազգային գերագույն ատյանը, բացարձակ համարառուն և ինքնավոր ուղղիչը Ընդհանուր Ժողովն էր, որուն 20 եկեղեցականները որոնմանց ույժին մեջ հավիվ 15% կկազմեին, պատրիարքն ալ որոշմանց գործադիր պաշտոնյա մըն էր դարձած, և եկեղեցական գաղափարը աննշանակ տարր էր ուղղություն տալու տեսակետեն: Դիտելի է ևս որ երբ ազդեցություն մը կջնջվեր, ուրիշ մը չէր կրնար զորանալ, քանի որ պետական տեսակետը չէր կրնար ներել որ իր սահմանին մեջ ուրիշ քաղաքական ձև մը կկազմվեր, որով թե՛ հինը կկորսվեր և թե՛ նորը չէր ստացվեր: Հունական ազգությունը, որուն կանոնագրությունը կամ Սահմանադրությունը Հայ ազգության Սահմանադրութենեն առաջ կազմվեցավ, ո՛չ մնայուն և վարիչ ու համարառու ընդհանուր ժողով ունի, ո՛չ առանձինն գործող քաղաքական ժողով ունի, ո՛չ աշխարհական խորհուրդներու բազմաթիվ ճյուղեր ունի, և այսօր հայ հասարակութենեն ոչ միայն հետնյալ չէ, այլ և ավելի խաղաղ և կանոնավոր կյանք կանցունե, և ազգային կոչված իրավունքները ավելի ամուր կերպով կպաշտպանե: Երուսաղեմի ընտրողական պայքարը, որով փոքրրիշատե վերաղեցանք և դեռ պիտի վերաղինք, Քաղաքական Ժողովին աշխարհականացուցման մարմաջին արդյունքն էր, և Սահմանադրության առաջին օրեն գայթակղության քար մը եղավ, և քիչ մնաց որ Սահմանադրությունը վտանգեր, մանավանդ որ միակ ալ չմնաց յուր տեսակին մեջ, և Սահմանադրական միջոցին Տաճկահայոց կյանքը սույն տեսակ էությամբ մանր այլ աղմուկով ծանր խնդիրներու անընդհատ շարահյուսություն եղավ: Իսկ թե ի՞նչպես պետական շրջանակը հաճեցավ այդպիսի Սահմանադրություն մը հաստատել, արդեն տեսնվեցավ որ պարզապես հանդարտություն պահպանելու բռնադատյալ վիճողություն մը եղավ, որուն հաստատությունը տալ տվողն իսկ խեթիվ հայեցավ, և նույն եպարքոսին բերանը կդրվի, թե տրված Սահմանադրությունը քառակուսի անիվ մըն էր, որ պայն դարձնել ուղղողներուն փորձանքը պիտի ըլլա: Նորեն կկրկնենք թե պատմագիրի անհրաժեշտ անաչառութենեն չխուսափելու տեսակետեն է այդ տողերուն շարժառիթը» (ԱԶԳ., հտ. 2731):

Ավելորդ չենք նկատեր մատնանշել, որ Սահմանադրության մեջ պատրիարքներու պաշտոնավարության ժամանակաշրջանը սահմանող նախատեսություն չկար, ինչ որ կնշանակե, որ կրնային Աթոռի վրա մնալ մինչև իրենց մահը: Հակառակ այս իրողության սակայն Սահմանադրության շրջանի 10—12 պատրիարքներեն մեկը միայն, Ներսես Արք. Վարժապետյան, այդ բախտին արժանացած է: Անոր դեմ ևս խաչակրություն մը սկսված էր Սահմանադրությունը իրենց անհանդարտ բնավորության կամ մենատիրական վգացումներուն գործիք դարձնել ուղղողներու կողմե, ինչ որ պատճառ դարձած էր որ իսկապես անձնվեր ու կարող այս պատրիարքը բռնվեր շաքարախտի հիվանդութենեն, ինչ որ փութացուց անոր մահը, վրկելով հայ ժողովուրդը և եկեղեցին այս արժեքավոր հոգևորական շնորհներեն, ըլլա այդ Պոլսո կամ Էջմիածնի Աթոռներուն վրա: Մնացյալներեն Աշըգյան եկեղեցանվեր Պատրիարքը վար առնվեցավ Աթոռեն իբրև հակասահմանադրական՝ ամենեն ողբերգական և անավագիչ պայմաններու տակ: Խրիմյանի և Եղիշե Դուրյանի նման ժողովրդանվեր և պատկառելի դեմքեր հարկադրվեցան հրաժարիլ Աթոռեն: Անոնցմե ոչ մեկը 5—6 տարիեն ավելի Աթոռի վրա կրցավ մնալ, բացի Օրմանյանեն, որ կրցավ 12 տարիներ բոլորել Աթոռին վրա, որովհետև իր օրով Սուլթան Համիտի հրամանով առկախված էր Սահմանադրությունը: Հավիվ թե Համիտի բռնակալությունը մասամբ մը սանձված էր, երբ Աթոռեն վար առնվեցավ նաև մեծ մտավորական ու դիվանագետ այս Պատրիարքը, ազգին անպատվություն բերող պայմաններու տակ: Այս կետին կրկին կուզենք խոսքը տալ Օրմանյանի և վերջավորության բերել Սահմանադրության մասին մեր արդեն իսկ ըստ բավականին երկարած այս ծանոթագրությունը:

«Սարգիս Գույումճյան Պատրիարք 1860 մայիս 2-են մինչև 1861 հոկտեմբեր 21 ամենայն փառոք իբրև սահմանադրական անձ Աթոռ բարձրանալով, իբր հակասահմանադրական մը հրաժարիլ պարտավորվեցավ: Այդ բախտը հասարակ է ամեն անոնց, **որ առողջ և խոհական սկզբունքներու հետևելով խնդիր մը կընդգրկեն, բայց ծայրահեղություններե խորշելով անկշռադատ գործիչներե կհալածվին:** Սահմանադրական սկզբունքը որ կանոնավոր վարչության հիմնակետը պիտի ըլլա, պետք չէ որ շփոթվի հախուռն և աղիկամի ձեռնարկներու հետ, որոնք ուղղամիտ կանոններե ավելի շահադետ նպատակներե կառաջնորդվին՝ (ԱԶԳ., էջ 4052): «Ազգային Սահմանադրությունը,—կըսե Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն կաթողիկոսը իր նամակներեն մեկին մեջ,— կմնա պատմության անցած եկեղեցական տեղական կանոնադրություն մը. իսկ մեր օրերուն պետք է

նոր կանոնադրությամբ մը օժտել մեր եկեղեցվո կառույցը»:

Ե.— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ:

Պոլսոյենիան կիրարկութենե ինկավ Ցարական Ռուս կայսրության անկումով 1917-ին: Այս կանոնադրությամբ ընտրվող վերջին կաթողիկոսը եղավ Գեորգ Ե Վշտալին 1911-ին: Իսկ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ առկախվեցավ Օսմանյան կայսրության անկումեն հետո 1922-ին: Թրք. Հանրապետական շրջանին անպաշտոն կերպով շարունակվեցավ կիրարկվիլ Սահմանադրությունը, մինչև 1960 թվականը, «անարյուն հեղափոխությունը», որմե հետո գրեթե իսպառ դադրեցավ կիրարկութենե: Թյուրքիո Պատրիարքներու և Թաղ. Խորհուրդներու ընտրությունները միայն՝ Սահմանադրության ոգիով կկատարվին ներկայիս:

Գեորգ Ե կաթողիկոսեն մինչև Վազգեն Ա կաթողիկոս, այսինքն շուրջ 70 տարիներե ի վեր, փորձեր կըլլան նոր ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ նախագիծեր պատրաստելու, որ կիրարկելի ըլլա համայն Հայց. Եկեղեցիին համար: Այդ առժամյա ՆԱԽԱԳԻԾԸ պատրաստվեցավ 1984-ին և 1985-ին, Վազգեն կաթողիկոսի կողմե նշանակված Հանձնաժողովի մը կողմե: Այս ՆԱԽԱԳԻԾՆ է, որ Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներուն հետ ևս խորհրդակցելե և համաձայնության մը հանգելե հետո՝ պիտի ներկայացվի Հայց. Եկեղեցիի Եպիսկոպոսական գերագույն Ժողովին, որ պիտի տա անոր վերջնական ձևը իբրև «ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ Հայց. Եկեղեցւոյ», և որ պիտի ամբողջանա «ՀԱՅՈՑ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ» կանոններուն տեսակավորյալ վերադասավորությամբ: Ներկայիս Հայց. Եկեղեցին չունի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ մը և հետևաբար անոր թեմերը, ինչպես նաև մեր նվիրապետական չորս Աթոռները, ունին իրենց ուրույն կանոնագրությունները, որոնցմով կկառավարեն իրենց ներքին գործերը: